Հաստատում եմ՝
Տնօրենի պարտականությունները
կատարող՝ Մ.Նավասարդյան

<<12>>սեպտեմբեր 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տարաս Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց

Ղուկասյան Մայրանուշ Վարդանի
(դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը)

10 ընդհանուր

<<2023-2024>>ուսումնական տարի

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Դասարան՝ 10 ընդհանուր

Դասղեկ՝ Մ.Ղուկասյան

1. Աշակերտների թիվը դասարանում՝ 19
   ա) աղջիկ՝ 9
   բ) տղա՝ 10

2. Վատ ապահովված ընտանիքների թիվը՝ 3
   Նրանցում երեխաների թիվը՝

3. Բազմազավակ ընտանիքների թիվը՝
   Նրանցում երեխաների թիվը՝

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Քաղաքացիական, բարոյական դաստիարակություն

Սովորողի՝որպես անձի, ձևավորման գործում կարևորելով անձի բարոյականդաստիարակությունը պետք է նրանց մեջ սերմանել պատասխանատվություն հայրենիքիհանդեպ, կարգապահություն, սկզբունքայնություն, հասարակությանը և պետությանը օգուտ բերելու պատրաստակամություն, քաղաքացիական ինքնագիտակցություն:

2.Հոգևոր դաստիարակություն

Հայեցի դաստիարակության, հոգեկերտվածքի ձևավորման նպատակով աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, կազմակերպել այցելություններ մոտակա հոգևոր, պատմամշակութային օջախներ: Կատարել պատմական ակնարկ՝խորացնելով գիտելիքները պատմամշակութային օջախների, եկեղեցական և պետական տոների մասին:

3.Գեղարվեստական դաստիարակություն

Գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ է աշակերտին ծանոթացնել մշակույթին, գրականությանը, արվեստին, ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին: Կազմակերպել այցելություններ մշակութային հաստատություններ, թանգարաններ, կազմակերպել հանդիպումներ գրողների, մշակութային բնագավառի տարբեր ներկայացուցիչների հետ: Անցկացնել զրույցներ՝սերմանելու համար սեր գեղեցիկի նկատմամբ:

4.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական կրթություն և դաստիարակություն սերմանելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել ռազմա-հայրենասիրական թեմաներով զրույցներ, կազմակերպել քննարկումներ՝սովորողների մոտ ձևավորելով հայրենիքի նկատմամբ հավատարմության, սիրո, հպարտության, պարտքի զգացում, սերմանել ակնածանք հայոց բանակիհանդեպ:

5.Ֆիզիկական դաստիարակություն

Կարևորելով ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի դերն ու նշանակությունը մեր կյանքում, օգնել աշակերտին վերահսկել, պահպանել և բարելավել իր հոգեկան և ֆիզիկական առողջությունը: Ֆիզիկական ակտիվությունը հնարավորություն է տալիս վարել ակտիվ կյանք, բարելավել ինքնագնահատականը, խթանել թիմային աշխատանքը, օգնել զարգացնել այնպիսի կարևոր արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, հարգանքը, համերաշխությունն ու պատասխանատվությունը:

6.Աշխատանքային դաստիարակություն

Սովորողների մոտ ձևավորել այն համոզմունքը, որ աշխատանքը հանդիսանում է հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուր:Աշակերտների մեջ սերմանել աշխատանքի նկատմամբ սեր և պահանջմունք, աշխատասիրություն, նպատակասլացություն, պատասխանատվություն, նրանց մղել հանրօգուտ աշխատանքներին ակտիվ մասնակցության:

7.Բնապահպանական դաստիարակություն

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը արդի խնդիրներից մեկն է: Անհրաժեշտ է սովորողներին ծանոթացնել բնապահպանական հիմնախնդիրներին, սովորեցնել պահպանել հայրենի բնությունը, ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք, մասնակցել մերձդպրոցական տարածքի կանաչապատմանը: Կազմակերպել էքսկուրսիաներ:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Ուսումնառության գործընթացում կարևորվում է ընտանիքի դերը, քանի որ հանդիսանում է պետության կորիզը: Դպրոց-ընտանիք կապը աշակերտի կրթության որակի բարձրացման և ապագա օրինակելի քաղաքացի կրթելու կարևոր նախադրյալն է: Ուստի,կարևոր է ծնողներին ներգրավել արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին, մշտապես իրազեկել իրենց երեխաների առաջադիմության, կարգապահության և հաճախումների մասին, համատեղ բացահայտել և քննարկել սովորողի հետաքրքրությունները:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է	Նշումներ Հիմնավորել պլանավորած-չկատարված աշխատանքի պատճառը
1-ին	Գիտելիքի օր Դասագրքերի բաշխում	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
2-րդ	Կազմակերպչական հարցերի քննարկում. Դասարանի ավագի ընտրություն	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
3-րդ	Կարգապահական խնդիրների վերհանում և քննակում աշակերտների հետ	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
4-րդ	Զրույց նվիրված անկախության տոնին	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
5-րդ	Զրույց նվիրված 27.09.2020 Արցախյան 2-րդ պատերազմին	Սեպտեմբեր	Սովորող, դասղեկ	
6-րդ	Զրույց նվիրված <<Ուսուցչի տոնին>>	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
7-րդ	Այցելություն Էրեբունի պատմահնագիտական արգելանոց-թանգարան	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
8-րդ	Աշակերտական խորհրդի ընտրություն	Հոկտեմբեր	Սովորող, դասղեկ	
9-րդ	Փոխըմբռնում՝ ազնիվ և անկեղծ հարաբերությունները մեր դասարանում (քննարկում, վերլուծություն)	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	
10-րդ	Զրույց՝ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման օր	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	

11-րդ	Կազմակերպչական հարցերի քննարկում	Նոյեմբեր	Սովորող, դասղեկ	
12-րդ	Զրույց նվիրված Հաշմանդամների համաշխարհային օրվան	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
13-րդ	Զրույց նվիրված <<1988թ. Սպիտակի երկրաշարժ>>թեմային	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
14-րդ	1-ին կիսամյակի առաջադիմության նախնական արդյունքների քննարկում	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
15-րդ	Մասնակցություն ամանօրյա միջոցառմանը	Դեկտեմբեր	Սովորող, դասղեկ	
16-րդ	2-րդ կիսամյակի կազմակերպչական հարցերի քննարկում	Հունվար	Սովորող, դասղեկ	
17-րդ	Զրույց 28.01. Հայոց բանակի օր	Հունվար	Սովորող, դասղեկ	
18-րդ	Ես պարտավոր եմ հայ հերոսներից ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի	Հունվար	Սովորող, դասղեկ	
19-րդ	Զրույց նվիրված <<Տյառնընդառաջին>>	փետրվար	Սովորող, դասղեկ	
20-րդ	Մայրենիի օր՝ գիրք նվիրելու օր 21.02	փետրվար	Սովորող, դասղեկ	
21-րդ	Ի՞նչ է սերն ու նվիրվածությունը:	փետրվար	Սովորող, դասղեկ	
22-րդ	Կազմակերպչական հարցեր	փետրվար	Սովորող, դասղեկ	
23-րդ	Մարտի 1 գարնան առաջին օրը	Մարտ	Սովորող, դասղեկ	
24-րդ	Մարտի 8 կանանց միջազգային օր, կանանց դերն ու նշանակությունը հասարակության մեջ	Մարտ	Սովորող, դասղեկ	
25-րդ	Երջանկության միջազգային օր՝ մարտի 20	Մարտ	Սովորող, դասղեկ	

26-րդ	Զրույց նվիրված ծիծաղի օրվան՝ ապրիլի 1	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
27-րդ	Մայրության և գեղեցկության օր՝ ապրիլի 7	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
28-րդ	Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր՝ ապրիլի 18	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
29-րդ	Հայոց ցեղասպանության հիշատակի օր՝ ապրիլի 24	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
30-րդ	Այցելություն Կոմիտասի անվան թանգարան	Ապրիլ	Սովորող, դասղեկ	
31-րդ	Աշխատավորների միջազգային օր՝ մայիսի 1	Մայիս	Սովորող, դասղեկ	
32-րդ	Մայիսի 9 հայրենական մեծ պատերազմի օր	Մայիս	Սովորող, դասղեկ	
33-րդ	Տարեվերջյան էքսկուրսիա	Մայիս	Սովորող, դասղեկ	
34-րդ	2-րդ կիսամյակի առաջադիմության նախնական արդյունքների քննարկում	Մայիս	Սովորող, դասղեկ	

Աշակերտական խորհուրդը բաղկացած է 3 անդամից:

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ	ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ	ՆՇՈՒՄՆԵՐ

ԾՆՈՂԿՈՄԻՏԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ Է 3 ԱՆԴԱՄԻՑ

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
12.09.2023	2022-23 ուստարվա 1-ին կիս. կազմակերպչական հարցեր։ Դասագրքերի վարձավճարների մասին։ Ծնողխորհրդիկազմի ընտրություն։ Հաճախումների, ուշացումների, աշակերտական կեցվածքի մասին։	Դասղեկը ներկայացավ, ծանոթացավ ծնողների հետ, որից հետո անրադարձավ ծնողական ժողովի օրակարգին։ Նշեց, որ բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով, որոնց վարձավճարը կազմում է 7230 դրամ։ Կարևորվեցաշակերտների հաճախումները, ուշացումները և դպրոց ներկայանալաշակերտական կեցվածքով։ Ծնողխորհրդի կազմի ընտրություն։ Դասարանի ծնողների ձայների մեծամասնությամբ դասարանի ծնողխորհրդի նախագահ ընտրվեց Սուսաննա Վարդանյանը, իսկ անդամներ Թովմասյան Իրինան և Գրիգորյան Լուսինեն։	